## Տասներկուերորդ թողարկում

| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի տասներկուերորդ թողարկման հիմնական պայմանները. | |
|---|---|
| Արժեթղթերի դասը | Անվանական արժեկտրոնային |
| Արժեթղթերի ձևը | Ոչ փաստաթղթային |
| Մեկ արժեթղի անվանական արժեքը | 10 000 ՀՀ դրամ |
| Արժեթղթերի քանակը | 40 000 հատ |
| Մեկ թողարկման ընդհանուր ծավալ | 400 000 000 ՀՀ դրամ |
| Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք ) | Տարեկան 13,00%, որը կհաշվարկվի սկսած տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող օրվանից |
| Արժեկտրոնային եկամուտների վճարում | Եռամսյակային վճարումների պարբերականությամբ |
| Շրջանառության ժամկետ | 24 ամիս |
| Տեղաբաշխման ժամկետ | 11/07/2016թ.-22/07/2016թ. |
| Տեղեկացնում ենք, որ պարտատոմսերի թողարկման ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 06/07/2016թ.: | |
| Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռք բերել 11/07/2016թ.-ից մինչև 22/07/2016թ.-ը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ ցուցակումից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում, մասնավորապես «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում: | |
| Պարտատոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է անձնական հաշիվներ բացել “Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա” ԲԲԸ –ի կողմից հաշվի օպերատորի կարգավիճակ ստացած ընկերություններում և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ–ում կամ ՀՀ տարածքում գործող ցանկացած բանկում: Կատարելով ներդրում կորպորատիվ պարտատոմսերում՝ Դուք կարող եք շրջանառության ընթացքում ցանկացած պահի դրանք վաճառելիս ետ ստանալ ոչ միայն ներդրված գումարը, այլ նաև կուտակված տոկոսները: | |
| “Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին” ՀՀ օրենքի համաձայն, Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են “Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի” կողմից: | |
| Պարտատոմսերի մարման ամսաթիվ՝ 23.07.2018թ. | |

**Ծանուցում.**

| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի տասներկուերորդ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով | |
|---|---|
| Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում | 23.10.2016թ. |
| Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում | 23.01.2017թ. |
| Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում | 23.04.2017թ. |

| | |
|---|---|
| Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում | 23.07.2017թ. |
| Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում | 23.10.2017թ. |
| Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում | 23.01.2018թ. |
| Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում | 23.04.2018թ. |
| Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում | 23.07.2018թ. |
| Այն դեպքում, երբ արժեկտրոնային եկամուտների վճարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, վճարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը: | |
| Արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման գումարի փոխանցումը կատարվելու է ՀԿԴ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին՝ պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման օրվա մինչև ժամը 14:00-ն: Արժեկտրոնային եկամուտը, ինչպես նաև մարման գումարը վճարվում են վճարման օրվանը նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում, պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին: | |
| Պարտատոմսերի և Բանկի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ Պարտատոմսերի թողարկման **ազդագրում**, որը 06.07.2016թ.-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից: | |